ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«04» հուլիսի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Նելա Մուրադյանը:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Օլանդա ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Լեվան ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

Օլանդա ՍՊԸ-ն, Մեգաօֆիս ՍՊԸ-ն, Լեվան ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Օլանդա ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Լեվան ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով Օլանդա ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 2-րդ, 4-րդ չափաբաժինների մասով Մեգաօֆիս ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով Լեվան ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի հայտը մերժել,
- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի, Լեվան ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Մեգաօֆիս ՍՊԸ-ի, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի, Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. 1-ին չափաբաժնի մասով՝ Ֆոտոն ՍՊԸ-ի, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի, Արեգ - Արիան ՍՊԸ-ի, 4-րդ չափաբաժնի մասով՝ Ֆոտոն ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ _____ Նելա Մուրադյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան